ՏԵՂԵԿԱՆՔ

2013 թ. գարնանային զորակոչի ընթացքում զորակոչիկների իրավունքների վիճակի և կազմակերպության կողմից արձանագրած խնդիրների մասին

2013 թ-ի առաջին կիսամյակում նախազորակոչային եւ զորակոչային ժամանակահատվածում զորակոչիկների եւ նրանց հարազատների կողմից շարունակվել են բողոքները եւ մտահոգությունները ոչ պատշաճ բժշկական զննության իրականացման վերաբերյալ՝ զորակոչիկների մոտ առկա հիվանդությունների եւ առանց բուժման զինված ուժեր զորակոչելու հետ կապված:

Զորակոչիկներին չի տրամադրվում պատշաճ բժշկական ծառայություն, շատ դեպքերում չի իրականացվում համալիր բուժզննություն: Արդյունքում, առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկները ենթարկվում են զորակոչի և ստիպված են զինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարել՝ ունենալով լուրջ հիվանդություններ: Վերստին հաշվի չեն առնվում մի քանի հիվանդությունների զուգակցմամբ պիտանիության հարցի վերաբերյալ մտահոգությունները:

2013 թ-ին գարնանային զորակոչի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած թվով 15 զորակոչիկներից 13-ի մոտ առկա է լուրջ առողջական խնդիրներ:

Ահազանգերի զգալի մասը կապված է զորակոչում ընդգրկված տարբեր պետական հաստատությունների /սկսած զինկոմիսարիատներից մինչև հանրապետական բժշկական հանձնաժողով/ կողմից իրենց գործառույթների իրականացման ընթացքում շարունակվող բյուրոկրատական քաշքշուկների հետ:

Առանձին մտահոգություն է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարի N175 հրամանով հաստատված «Զինապարտների բժշկական փորձաքննության կարգում» կատարված փոփոխությունները: Ի դեպ, հրամանում

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

փոփոխությունները կատարվեցին զորակոչի ընթացքում՝ 2013 թ. հունիսի 11-ին, այսինքն, հենց զորակոչի ընթացքում փոխվեցին զորակոչի կազմակերպման, իրականացման կանոնները: Նշված կարգով սահմանվում են քաղաքացու զինվորական ծառայությանը ըստ առողջական վիճակի պիտանիության հարցի որոշման ընթացակարգերը և հիվանդությունների ցանկը:

Նոր կարգով ընդհանրապես հանվեց «ոչ շարային ծառայություն» հասկացությունը: Արդյունքում նախկին կարգով նման որակման համար հիմք հանդիսացող հիվանդություններ դեպքում, նոր կարգով որակվում են պիտանի է ծառայության «շարային՝ սահմանափակումով» ձեւակերպմամբ: Իսկ թե ինչ է ենթադրում “սահմանափակումով” շարային ծառայությունը, սահմանված չէ: Այլ կերպ Հրամանը որեւէ այլ բովանդակային փոփոխության չի ենթարկվել:

Զորակոչիկների եւ նրանց ծնողների մտահոգությունները կարելի է ամփոփել հետևյալ խմբերի.

- բժշկական հաստատություններում, որտեղ զորակոչիկները անցնում են հետազոտություններ, կա հստակ հրահանգ, որ զորակոչային տարիքի անձանց բուժզննության արդյունքներով բացահայտված խնդիրները առավել մեղմ ձևակերպումներով արձանագրվեն, այսինքն չի ներկայացվում զորակոչիկի առողջական վիճակի օբյեկտիվ պատկերը
- նախկինում մեկ կամ մի քանի անգամ տարկետում ստացած անձանց զորակոչում են զինծառայության՝ առանց առողջական վիճակի որեւէ փոփոխության, այն դեպքում, երբ նրանց տարկետում է տրամադրվել նախկինում նույն ախտորոշման հիմքով
- առողջական վիճակի հետազոտության արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մերժում են տրամադրել ուղեգիր՝ կրկնակի բուժզննություն անցնելու համար
- առողջական վիճակի հետազոտության արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում զորակոչիկը, փաստորեն, հնարավորություն չի

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ունենում բողոքարկել, քանի որ չի դադարեցվում նրա զորակոչը մինչ հարցի վերջնական լուծումը

- զորակոչիկներին տրամադրվող տրանսպորտային ծախսերի փոխհատուցման չափը բավարար չէ բժշկական հետազոտություն անցնելու համար, որի պատճառով, շատ դեպքերում, զորակոչիկները չեն ներկայանում բուժզննության
- շարունակվում է տարբեր պատճառաբանություններով զորակոչիկներին չտրամադրվել իրենց առողջական վիճակի մասին տեղեկությունը՝ չնայած այն հանգամանքին, որ «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» ՀՀ օրենքը սահմանում է անձի այդ իրավունքը:[1]

Այսպիսով, առողջական խնդիրների առկայությամբ քաղաքացիների զորակոչի ենթարկումը մնում է մտահոգության լուրջ խնդիր ոչ միայն զորակոչի, այլև հետագա պատշաճ զինվորական ծառայության հետ կապված:

Գտնում ենք, անկախ իրավական ձևակերպումներից, առողջական խնդիրներով քաղաքացու զորակոչի ենթարկումը հանդիսանում է անձի արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք պետության կողմից, և նման պրակտիկան պետք է դադարեցվի:

[1] Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

ՀԱՎԵԼՎԱԾ

Ներկայացվում է մի քանի զորակոչիկների դեպքերի նկարագրությունները.

1. Զորակոչիկ Ա. Բ-ն ունի լուրջ առողջական խնդիրներ, որոնք, սակայն, կենտրոնական բժշկական հանձնաժողովը բուժզննության ընթացքում հաշվի չի առել: Ա. Բ-ի մոտ առկա բազմաթիվ առողջական խնդիրները եւ գանգատները, ինչպես նաեւ նրա կողմից ներկայացված փաստաթղթերը, եւ առողջական վիճակի եզրակացության հիման վրա Հանրապետական զորակոչային հանձնաժողովը որոշում է կայացրել հունիսի 23-ին Ա. Բ-ին զորակոչել: Բացի այդ, բժշկական հաստատությունում, որտեղ նա անցել է բուժզննություն, բանավոր կերպով տեղեկացում են առողջական վիճակի առավել լուրջ աստիճանի մասին, սակայն բժշկական փաստաթղթերում ներկայացվում է ավելի թույլ աստիճան: Նմանատիպ ահազանգ նշել է նաեւ զորակոչիկ Հ. Ք-ն:
2. Զորակոչիկներ Ա. Ա-ն եւ Հ. Ք-ն փաստում են, որ համաձայն չլինելով իրենց առողջական վիճակի հետազոտման վերաբերյալ եզրակացության հետ, խնդրել են ուղեգիր, որպեսզի ենթարկվեն կրկնակի բժշկական զննության, սակայն նրանց մերժել են ուղեգրել համապատասխան բժշկական հաստատություն կրկնակի բուժզննության եւ արդյունքում նրանք երկուսն էլ զորակոչվել են զինվորական ծառայության: Նույն կերպ, զորակոչիկ Ա. Մ-ն ունենալով առողջական լուրջ խնդիրներ, անցել է բժշկական հետազոտություն, սակայն նրան տրամադրվել է վերջնական եզրակացություն՝ առանց կրկնակի հետազոտման, չնայած այն հանգամանքին, որ Զինապարտների եվ զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու եվ ՀՀ պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի N 175-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՊՆ հրամանի 32-րդ կետի համաձայն՝ քաղաքացիներին զորակոչային տեղամասերին կցագրելու և պարտադիր զինվորական ծառայության զորակոչելու ժամանակ

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am

զինկոմիսարիատները կազմակերպում և անցկացնում են նրանց համակողմանի ուսումնասիրություն՝ առողջական և ֆիզիկական զարգացման վիճակը գնահատելու համար:

3. Զորակոչիկ Ա. Ա-ն զինկոմիսարիատի որոշումը բողոքարկելու համար պահանջել է, որպեսզի զինկոմիսարիատը տրամադրի բժշկական զննության հետ փաստաթղթերը, սակայն պահանջի դեպքում միայն տրամադրում են Երևան քաղաքում իրականացված բուժզննության արդյունքները՝ նրանից թաքցնելով տեղական հանձնաժողովի եզրակացությունը: /ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք/:
4. Զորակոչիկ Ա. Ա-ին տեղական բժշկական հանձնաժողովի բժիշկներից մեկը հայտնում է, որ Ա. Ա-ի առողջական վիճակի հետազոտման վերաբերյալ եզրակացության ակտի ստորագրությունը չի պատկանում իրեն, որի մասին տեղեկացվել է զինկոմիսարիատը, սակայն որեւէ լուծում հարցին չի տրվել այն հիմնավորմամբ, որ ընդամենը շփոթմունք է տեղի ունեցել:
5. Զորակոչիկ Ա. Մ-ն ունենալով առողջական լուրջ խնդիրներ, անցել է բժշկական հետազոտություն, սակայն նրան տրամադրվել է եզրակացություն առանց համալիր հետազոտման:

59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am
Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am